

ՏԵՏԵՅԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈՐՅԱՆ

Զմյուռնահայ գաղթօջախը, ուր հայ մշակութային կյանքն անցած դարի կեսերից մեծ վերելք է ապրել, տվել է բազմաթիվ նշանավոր գործիչներ, որոնք կայուն տեղ ունեն մեր պատմության մեջ: Նրանցից առավել ակնա-վորների գործունեությունը, կարելի է ասել, բավարար չափով ուսումնասիր-ված ու լուսաբանված է: Բայց և քիչ չեն այն գործիչները, որոնք գրեթե մո-ռացության են մատնված, չեն արժանացել պատշաճ ուշադրության:

Վերջիններից հատկապես անհրաժեշտ է անդրադառնալ Տետեյան եղ-բայրների գործունեությանը, որ նշանակալի հետք է թողել հայ մշակույթի մի շարք ասպարեզներում՝ գրատպություն, թարգմանական գործ, հրապարա-կագրություն, մշակութային կապեր, լեզվաշինարարություն:

Տետեյանների այդ գործունեությունը սկսվել է անցած դարի կեսին և գո-յատևել է մինչև մեր դարի սկզբները՝ ունենալով բավական բեղմնավոր ընթացք: Տակավին քսանամյա երիտասարդ Հարություն Տետեյանը նախա-ձեռնել է գաղթօջախում նոր տպարան հիմնելու դժվարին գործը՝ աջակից ունենալով մի խումբ համախոհների: 1853 թ. մայիսի 1-ին՝ Զմյուռնիայում սկսել է գործել նրա հիմնած տպարանը՝ հրապարակ հանելով մի շարք գոր-ծեր՝ «Տպ. Տետեյան եղբարց» դրոշմատիպով: Տպարան հիմնելու համար վա-ճառականական գերդատարնի զավակները, անշուշտ, ունեցել են նյութական բավարար հնարավորություն, բայց և հիշատակություն կա այն մասին, որ գործը գլուխ է բերվել հանգանակության միջոցով, որի նախաձեռնողներից ու կազմակերպողներից մեկն էր գաղթօջախի լուսավորյալ գործիչներից Հ. Նուպարյանը<sup>1</sup>:

Ենթադրվում է, թե Տետեյանները սկզբնապես ձեռք են բերել տարիներ շարունակ անգործության մատնված Մեսրոպյան վարժարանի տպարանի սարքավորումները, ապա և Արագածունյաց ընկերության (1843—1846) տպարանը, որը ընկերության հրատարակած «Հայրենասեր» թերթի խափա-նումից հետո կաղն ի կազ գործում էր Հ. Մելիքսելումյանցի տնօրինությամբ<sup>2</sup>: Սակայն Տետեյանների տպարանը հագեցվել է Կ. Պոլսում, Վենետիկում և Փարիզում ձեռք բերված սարքավորումներով ու տառատեսակներով: Շու-տով հիմնվել է նաև սեփական տառածուպարան<sup>3</sup>:

Տպարան հիմնելու և գրատպության ձեռնամուխ լինելու մեծ ոգեշնչողը Տետեյանների համար նախ եղել է գաղթօջախի հայտնի լուսավորիչներից մեկը՝ Մեսրոպյան վարժարանի տեսուչ և երկարամյա մանկավարժ, գրական ճաշակ ու ձիրք ունեցող Ա. Փափազյանը (1806—1857), որն առհասարակ խրախուսել է իր սաների և գաղթօջախի երիտասարդության մշակութային շատ ձեռնարկումներն ու սկզբնաքայլերը<sup>4</sup>: Տպարան հիմնելու և գրատպու-

1 «Մաղեկ», 10. III. 1862, էջ 210:

2 «Արևելյան մամուլ», 1893, № 22, էջ 704:

3 Մեսրոպյան վարժարանի տպարանը 1841—1844 թթ. լույս է բնծայել 10 անուն գիրք, Արագածունյաց տպարանը, բացի «Հայրենասեր» թերթից, 1843—1845 թթ.՝ 2 անուն գիրք (տե՛ս «Հայ գիրքը 1801—1850 թվականներին», Երևան, 1967, էջ 524, 525):

4 Ք ե ո դ ի կ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 437:

5 «Արևելյան մամուլ», 1894, № 22, էջ 702—703:

թյունը զարգացնելու գործում Հ. Տետեյանի առաջին աջակցողներն էին նրա եղբայրները՝ Կարապետը և Ստեփանը, որոնք և հետագայում այս կամ այն շափով առաջ են տարել սկսած գործը:

Մինչև տպագրական գործին ձեռնամուխ լինելը, պատանեկության տարիներին Տետեյան եղբայրները հայտնի էին իբրև Մեսրոպյանի առաջադեմ աշակերտներ, անդամ էին Սյունյաց հայտնի ընկերության, ձեռքի աշխատանքներում ցուցաբերում էին որոշակի հմտություն: Կ. Տետեյանը (նաև Հավյան) սկսած 1841 թ. իտալերենից, ֆրանսերենից և անգլերենից կատարած թարգմանութուններ էր հրատարակում «Արշալույս արարատյան» թերթում: Հ. Տետեյանը (1832—1868), որ մի քանի անգամ արժանացել էր դպրոցական մրցանակների, հմտություն է հանդես բերել քարտեզագրության ասպարեզում՝ պատրաստելով ուսուցողական քարտեզ և «մեկ սքանչելի աշխարհագրոյց», հանդես էր գալիս ատենախոսութուններով: Մամուլի էջերում 1848-ից թարգմանութուններով հանդես էր գալիս նաև Ս. Տետեյանը (1823—1906): Պատանեկան տարիներից նրանք, հատկապես Արամ Կարապետ Տետեյանը («Ա. Կ. Տ.»)<sup>7</sup>, տպագրում էին նաև ինքնուրույն, հիմնականում շափածո-երգիծական ստեղծագործություններ և ուղեգրական նոթեր:

Ձեռնամուխ լինելով տպագրական գործին և այդ նպատակին հատկացնելով իրենց վաճառական հոր՝ Հովհաննես Կ. Տետեյանի (1799—1877) հիմնական միջոցները, Տետեյան եղբայրները գլխավորապես առաջնորդվում էին հայրենասիրական մղումներով: Գրատպությունը, որպես լուսավորության տարածման գլխավոր միջոց, անցած դարակեսերին ազգային առաջադիմությանը խթանող լուրջ գործոններից էր և, նպաստելով նրա զարգացմանը, թեկուզ միայն այդքանով, նրանք իրենց ավանդն էին բերում հայ մշակույթին:

Տետեյան եղբայրների տպարանն իր ժամանակի մեր ամենաերկարակյաց տպարաններից մեկն էր և գործել է շուրջ քառասուն տարի՝ 1853—1893 թթ.: Տպարանի գործունեությունը բեղմնավոր էր նախ իր հրատարակած դրքերի քանակով: Առաջին տասնամյակում՝ մինչև 1862 թ., տպարանը լույս է ընծայել 55 անուն թարգմանական և ինքնուրույն գիրք և 5 պարբերական<sup>8</sup>: Հաջորդ տասնամյակում՝ առ 1872 թ., հրատարակութունների թիվը հասել է 120-ի, իսկ գոյատևած ամբողջ ընթացքում լույս է ընծայել 208 հատոր երկ, դասագիրք, ձեռնարկ, հանդես և թերթ<sup>9</sup>: Այդ հրատարակութունները մեծ տարածում են գտել ոչ միայն գաղթօջախում, արևմտահայ և սփյուռքահայ շրջաններում, այլև արևելահայ կենտրոններում ու գաղթօջախներում: Հայ ընթերցողն ավելի քան կես դար զգալի շափով մտավոր սնունդ էր ստանում Տետեյանների հրատարակութուններից:

Ըստ էության Տետեյանների հաստատությունը եղել է տպարան-հրատարակչություն, որի շուրջը համախմբվել էին գաղթօջախի երիտասարդ կարող ուժերը՝ հեղինակներ և թարգմանիչներ, որոնք մշակութային գործունեության լայն ասպարեզ էին ստանում՝ ազատվելով այս կամ այն գործը հրատարակելու հետ կապված մեծ տառապանքից: Դրանք գաղթօջախի հենց առավել առաջադիմական, հայրենասիրությամբ ու դեմոկրատական գաղափարներով ներշնչված գործիչներն էին՝ Գ. Զիլինկիրյան, Մ. Նուպարյան, Մ. Մամուրյան, Ս. Միրզայան-Վանանդեցի, Գ. Մսերյան և ուրիշներ, որոնք մեծ նպաստ են բերել հայ մշակույթին և թարգմանական գործին, արևմտա-

<sup>6</sup> Նույն տեղում, 1893, № 10, էջ 474, «Արշալույս արարատյան», 6. VII. 1851:

<sup>7</sup> Որոշ աղբյուրներում Կ. Տետեյանի կնքանունը նշվում է Արամ՝ նրա իսկական անվան՝ Կարապետի, փոխարեն: Իր սաներին հայոց դիցաբանության և հերոսների անուններով կոչելու ավանդույթով Ա. Փափազյանը նրան շնորհել էր Արամ կրկնանունը:

<sup>8</sup> Հրատարակութունների ցանկը տե՛ս «Մաղիկ», 20. IV. 1862, էջ 256:

<sup>9</sup> «Արշալույս արարատյան», 19. IX. 1872, «Արևելյան մամուլ», 1901, №4, էջ 148, № 5, էջ 191:

հայ աշխարհաբարի մշակմանն ու ժողովրդականացմանը, հայ հասարակական մտքի զարգացմանը՝ վերջինիս ընթացքը բեղմնավորելով արևմտանվորուսյական, հատկապես ֆրանսիական առաջավոր գաղափարախոսության թթիվորով:

Ստանձնելով գրատպության հոգսը, Տեղեկանքը, մանավանդ տպարան-հրատարակչության հիմնադիր Հ. Տեղեկանք, հանձնարարում-պատվիրում էին այս կամ այն գործի թարգմանությունը, առաջինը մեր իրականության մեջ՝ գոհացուցիչ վճարում թարգմանիչ-հեղինակներին, իրագործում գրքերի առաքումը տարբեր երկրներ ու զաղթօջախներ: Նրանց դրեթե բոլոր հրատարակություններն աչքի են ընկնում տպագրական բարձր մակարդակով ու դյուրընթեռնելիությամբ, թղթի որակով ու ձևավորման ճաշակով: Ընդհանուր հայտարարով Տեղեկանքի հրատարակություններն իրենց աշխարհիկ ուզովածությամբ պատկառելի շահով ու նպաստավոր գերակշռությամբ տարբերվում էին Մխիթարյանների հրատարակություններից, որոնք տասնամյակներ շարունակ վայելում էին մենիշխանության իրավունքը հայ իրականության մեջ: Տեղեկանքի հրատարակությունների շնորհիվ հայտնի շահով սեղի ունենր հայ ընթերցողի մտածողության հեղաշրջում, դրական ճաշակի աննախադեպ վերելք, աշխարհընկալման ու ճանաչողության մեծ ընդլայնում:

Բավական է հիշատակել այն հեղինակների թեկուզ ոչ լրիվ ցանկը, որոնց երկերը Տեղեկանքի հրատարակությամբ հատոր առ հատոր մատուցվել են հայ ընթերցողին և որոնց նա ծանոթացել է հենց նրանց շնորհիվ. Ժան-Մուրիեր, Վ. Հյուգո, Գյոթե, Լամարթին, էժ. Սյու, Ապ. Պրեվո, Շատոբրիան, Ալ. Դյումա, Ժ. Վեռն, Վ. Սկոտ, Վոլտեր, Ժ. Սանդ, Օգ. Ֆեոյե, Ալ. Մյուսե և ուրիշներ: Հաճախ այդ գրողների երկերը թարգմանիչները կամ հրատարակողներն ուղեկցել են նրանց ստեղծագործություններին նվիրված առաջաբաններով, որոնք ոչ միայն ընթերցողին ծանոթացրել են հեղինակների դիմագծին, օգնել ճիշտ ըմբռնելու հրատարակված երկը, այլև կողմնորոշել են նրան, քննել գրական ուղղության հարցեր, մինչև անգամ հաճախակի առաջադրել հայ ազգային գրականության ստեղծման ու զարգացման հրատապ խնդիրներ: Այսօր էլ այդ առաջաբանները զուրկ չեն հետաքրքրությունից և որոշակի շահով ներկայացնում են հայ գրականագիտական ու գրաքննադատական մտքի ընթացքը: Ավելին կարելի է ասել թարգմանական այդ ամբողջ գրականության մեզանում ունեցած ներգործության և հասարակական նշանակության մասին: Իրենց գերազանց մասով այդ թարգմանությունները թելադրված էին ազգային կյանքի արթնացման պահանջներով և ընդհանուր առաջընթացով, որը դրսևորվում էր նախ և առաջ լուսավորության, մասնավորապես մամուլի՝ գրատպության ու պարբերական հրատարակությունների ասպարեզում:

Հիշատակենք Տեղեկանքի միջոցով իրագործված թարգմանություններից մի քանիսը, որոնք վկայում են այդ հրատարակությունների գրական-մշակութային մեծ արժեքը, նաև գաղափար տալիս զմյուռնահայ լուսավորիչ-գործիչների մեծ ընդգրկման մասին: Մ. Մամուրյանի թարգմանությամբ Տեղեկանքը հրատարակել են Գյոթեի, Ալ. Դյումայի, Վ. Սկոտի, Ժ. Վեռնի, Վոլտերի, էժ. Սյուի երկերը: Գ. Մսերյանը երիտասարդ տարիներից անդամակցելով Տեղեկանքի ստեղծած թարգմանիչների խմբակցությանը, նրանց միջոցով լույս է ընծայել Ալ. Դյումայի, Օգ. Ֆեոյեի, Ամ. Աշարի, Ժ. Սանդի և Ռ. Տեպրի գործերը: Նշանակալից էր Գ. Զիրինկիրյանի աշխատակցությունը Տեղեկանքի հետ, որը պսակվել է Վ. Հյուգոյի, ինչպես և Լամարթինի, էժ. Սյուի, Ժ. Սանդի, Ապ. Պրեվոյի, Ալ. Մյուսեի, Օգ. Ֆեոյեի և ուրիշների երկերի լույս ընծայմամբ: Մ. Նուպարյանը, գործակցելով նույն տպարան-հրատարակչության հետ, հայ ընթերցողին ներկայացրել է Ռասինի և Վ. Հյուգոյի գործերը:

Եթե շարունակելու լինենք այս ցանկը, հարկ կլինի թվարկել ևս մի տասնյակ թարգմանիչների, նրանց շարքում նաև կին թարգմանիչների, որոնք  
ԼՊԻԵ 10—4

առաջին անգամ էին ասպարեզ մտնում՝ Ա. Թագվորյան, Գ. Պալղազարյան, Փ. Վարդանյան, Ս. Ղուկասյան, Լ. Պալասանյան, Մ. Ծերմակյան, Ն. Միրզա և ուրիշներ: Բայց բավարարվենք, հիշատակելով հենց իրենց՝ Տետեյան և դարձյուններին, նույնքան բեղմնավոր թարգմանական գործունեության մասին: Նրանց մեջ այս ասպարեզում ևս առաջնությունը պատկանում է Հ. Տետեյանին: Անխոնջ տպարանապետը նաև տաղանդավոր թարգմանիչ էր և, ինչպես վերհիշել են ժամանակակիցները, գրիչը ցած չէր դնում նույնիսկ ծանր հիվանդության օրերին, ինքն էր կատարում իր թարգմանությունների սրբագրությունն իսկ: «Հարություն Տետեյանի համար,— գրել է Մ. Նուպարյանը,— կրնա հաստատապես ըսվել թե տպարագրապետ ըլլալու ի ծննդեն սահմանված էր... Տպարանին հառաջդրվածությունը,— այս էր իր հարատև խորհրդոց միակ առարկան—ուրիշ փափաք, ուրիշ նպատակ չունեի աշխարհի վրա... կարծեք ինք տպարանին համար եղած ըլլար... Նա իր տպարանին հետ զուգված, նույնացած, միավորված էր... Գիշերները նույնպես իր գրական աշխատությանց կպարապեր միշտ տպարանին համար, փորձերը կսրբագրեր անկողնին մեջ: Այս այսպես էր որքան տարի որ ապրեցավ: Նա ամեն բան էր տպարանին մեջ և տպարանին համար՝ գրաշար, սրբագրիչ, մերթ տպագրիչ անգամ, և որքան մեծ հաջողակությունը: Երբ տպարանին մեջ հարկ մը չկար իր անմիջական ներկայության կամ գործակցության, կառանձնանար անոր խորը զստված սենեկիկը՝ որև բան մը հեղինակելու կամ թարգմանելու համար»<sup>10</sup>, «Նա ժամանակի հառաջ աշխարհաբառյան՝ անոր կարևորությունը կգնահատեր արդեն...»<sup>11</sup>, ժամանակակիցի վկայությունն անհրաժեշտորեն ամբողջապես է մեր մեծ լեզվաբանի՝ Հ. Աճառյանի, հետազոտությամբ և բնութագրությամբ: Շեշտելով թարգմանական դրականության մեծ ու վճռական դերն ընթերցանության զարգացման և աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը՝ իրականացնելու գործում, նա նկատել է, որ «առանձին ուսումնասիրության նյութ է կազմում այս կարգի վեպերի թարգմանության և թարգմանիչների պատմությունը», այդ «նշանավոր թարգմանիչների» շարքում հիշատակել է նաև Հ. Տետեյանին<sup>12</sup>:

2. Տետեյանը, որ ապրել է 36 տարի, իր բեղմնավոր գրչով հայ ընթերցողին է ներկայացրել Ժ. Մոլիերի «Ազահը», «Ակամա բժիշկ» և «Սերը բժիշկ է» կատակերգությունները, անհայտ հեղինակի «Անգեղա Քաճիլի», Ք. Շմիտի «Ժենըլիենի», Վ. Հյուգոյի «Վուրեցիա Պորճիա», Ա. Դյումայի «Կոմա Մոնթե-Քրիստո» ու «Քարթերին Հովարդ» երկերը, դրանցից մի քանիսը՝ մեկից ավելի հատորներով<sup>13</sup>: Նա միաժամանակ հորինել ու հրատարակել է իր տեսակի մեջ առաջին աշխարհաբար ընթերցարան-այբբենարանը, որ վերատպվել է բազմիցս, աշխատասիրել է «Քերականություն հայերեն լեզվի» երկու մասից բաղկացած ձեռնարկը, ինչպես և աղթագիրը, 1867 թ. օրացույց, ավագ եղբոր հետ նաև «Օսմանյան պատմություն» ծավալուն երկասիրությունը:

2. Տետեյանի տպագրական-հրատարակչական գործը նրա մահվանից հետո շարունակել է Կ. Տետեյանը, ոտի գրիչը ևս բավականաչափ բեղմնավոր էր: Նա Հաշտենից լուսավորական-դեմոկրատական ընկերության հիմնադիրներից էր: Իբրև թարգմանիչ Կ. Տետեյանը պատիվ ունի վայելելու Շեքսպիրի երկերի հայ առաջին թարգմանիչներից մեկի դասին: Նրա, կարելի է ասել, հաջող և տեքստային ուղիղ թարգմանությամբ հրատարակվել են Շեքսպիրի

<sup>10</sup> «Արևելյան մամուլ», 1901, № 4, էջ 151—152:

<sup>11</sup> Նույն տեղում, № 3, էջ 99:

<sup>12</sup> Հ.ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 496: Ի դեպ, անվանի լեզվաբանն այս աշխատությունում քանիցս դիմել է Տետեյանների հրատարակած թարգմանություններին:

<sup>13</sup> Մամուլում նա թարգմանաբար հրատարակել է նաև «Նորմա» և «Թրոպիստ» գործերը («Միություն», 1860, № 2, 20):

«Կատակերգություն սխալանաց», որ լույս է ընծայվել իբրև «Արփի արարատյան» հանդեսի հավելված՝ 1853 թ., «Վենետիկի վաճառականը» («Շապերժահարս» հանդեսում), «Համելար» («Դիմակ» հանդեսում) և «Հոռմեոս և Ճյուղեղդա»՝ բնագրից, առանձին գրքով, 1866 թ. ողբերգությունները, ինչպես և Ժ. Սոլիերի «Թարթյունքը» (առանձին գրքով, 1874 և 1882 թթ.): 1863 թ. նա հրատարակել է «Ումպը գրասիրության» ինքնուրույն ուսուցողական ժողովածուն: Ցավոք նա չի շարունակել գրական-թարգմանական իր գործունեությունը, տարվել է տոմարագիտությամբ ու բուսաբանությամբ, զբաղվում էր ծաղիկների օտար անվանումները հայերեն անուններով փոխարինելու գործով<sup>14</sup>:

Չանդրադառնալով «մեծ աղքատսերի» համբավ վայելած Ստեփան Տետեյանի գործունեությանը, որ սահմանափակվել է տպարանի տնօրինությամբ, հասարակական աշխատանքներով և մշակութային ու բարեգործական մի շարք ընկերությունների (Սյունյաց, Հայ ընթերցատուն, Տիգրան, Աղբատասիրաց) ակտիվ անդամակցությամբ, անդրադառնանք նաև Հայկ Հակոբ Տետեյանին: Նա նույնպես մի որոշակի ժամանակաշրջան զբաղվել է եվրոպական հեղինակների գործերի թարգմանություններով, իսկ սլատոսնի տարիներին տպագրվում էր «Բուրաստան ս. Սահակյան»՝ հանդեսում, ավելի ուշ՝ «Մաղիկում»: Նրա թարգմանությամբ լույս են տեսել «Հասկաքաղ աղբիկը» ոչ ծավալուն պիեսը, էժ. Սյուրի «Գաղտնիք Փարիզում» դրաման, «Մաղաբանությունը Նասրեդդին Հոճայի» գիրքը (ընդուն էլ կրկնակի տպագրությամբ): Սակայն շուտով նա նվիրվել է վաճառականության՝ հետևելով հոր օրինակին: Ուշագրավ է և այն, որ նա հեղինակել է և եվրոպական ձայնախիշորով ճոխ տպագրությամբ հրատարակել զինվորական քայլերգ, որ կատարվում էր «Վասպուրական» թատրոնի բեմադրությունների ընթացքում: 1867 թ. Փարիզում կազմակերպված համաշխարհային ցուցահանդեսում ներկայացրած 54 տեսակ մրգերի, պտուղների և վարդայուղի համար նա արժանացել է ոսկե և պղնձյա մեդալների<sup>15</sup>:

Որքան մեծ են Տետեյանների հրատարակած թարգմանական գրականության արժեքն ու մասշտաբը, նույնքան էլ նշանակալից է հայ հեղինակներին ինքնուրույն գործերի, նրանց հրատարակության ընդհանուր հայտարարը: Նշենք դրանցից մի քանիսը: Տետեյանները լուրջ ծառայություն են մատուցել հայ հասարակական մտքին, 1879 թ. հրատարակելով քնազետ-փիլիսոփաաթեիստ Գ. Կոստանդյանի «Մեթոդի վրա» երկը: Դրանից առաջ՝ 1858 թ., նրանք լույս են ընծայել Գ. Կոստանդյանի «Հասարակաց թանգարան» մատենաշարը (16 գրքուկ): Նրանք են հրատարակել Ս. Ոսկանյանի, Ա. Հայկունու, Գ. Պատկանյանի, Հ. Սըվաճյանի, Գ. Մկրտչյանի, Ն. Միրզայի, Ո. Գ. Բարխուդարյանցի (Չանգեզուրցի) երկերը, Նիշիի «Պատմություն Վարդանանցը», Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունը», Մ. Մամուրյանի «Հայկական նամականին», «Անկլիական նամականին», «Տուն դուրս» թատերախաղը, «Համառոտ ընդհանուր պատմությունը», Հ. Վանանդեցու «Տեսա-

<sup>14</sup> Նշենք նաև, որ Կ. Տետեյանը, օժտված լինելով որոշակի ձիրքով և մեծ հակում ցուցաբերելով շափածո ստեղծագործությունների նկատմամբ, կազմել էր հայերեն առաջին «Հանգարանը» տակավին «1836 թ.»։ Դա հայտնի է դառնում «Մաղիկի» հազորդումից, ուր նշվում է, թե գործի «մեկ քառորդը տպված պիտի ըլլա», որ նրա ամբողջական տեքստից մեկական օրինակ 1851-ին նվիրվել է Օրթագյուղի թանգարանին և Մեսրոպյան վարժարանին «Մաղիկը» այդ մասին գրել է այն կապակցությամբ, որ Կ. Պոլսում հրատարակվել է նման մի գործ և ցավ է հայտնել Կ. Տետեյանի անհոգության առթիվ, որով զիջել է այդպիսի գործ կատարած լինելու ռատաշին պատիվը» («Մաղիկ», 10. VI. 1862, էջ 295—296: Նշվող տարեթիվը՝ 1836, հավանաբար վրիպակ է):

<sup>15</sup> «Արշալույս արարատյան», 23. II, 13. VII. 1862, 8. VI. 1868, «Բաղմավեպ», 1867, № 11, էջ 343—344:

բան հանդեսիցն Հայկա, Աղամա և Արայի» ստվարածավալ դյուցազնապոեմը, ինչպես և 5—6 հանդեսներ<sup>16</sup>,

Տետեյանների ամբողջ վաստակը, նրանց տպագրությունները, որոնց մի փոքր մասը միայն այստեղ հիշատակվեց, կարոտ են հատուկ ուսումնասիրության<sup>17</sup>։ Դրանք կազմում են անցած դարի երկրորդ կեսի մեր մշակույթի և գրատպագրության պատկառելի մասը, որը պետք է ստանա նաև գիտական արժեքավորում, մեկտեղվի մի ամբողջական մատենագիտությամբ։ Այստեղ մեզ առավելապես հետաքրքրում են Տետեյանների հրատարակագրական գործունեությունը, մանավանդ նրանց հիմնած ու հրատարակած հանդեսները։

1853—1856 թթ. Տետեյանները (Հ. Տետեյանի գլխավորությամբ) հրատարակել են «Արփի արարատյան» հանդեսը՝ ունենալով որոշակի բաժանորդներ և աշակերտներ։ Հանդեսն առաջին իսկ համարից ունեցել է երկու բաժին՝ բուն պարբերականը և հավելված։ Իր այդ դիմագծով, հայտնի չափով նաև բովանդակությամբ, «Արփի արարատյանը» նորություն էր հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Առաջին անգամ պարբերական հրատարակությունն ուղեկցելով հավելվածներով, Տետեյանները դրանով իսկ հանդեսի նկատմամբ մեծ հետաքրքրություն էին առաջացնում, նրա հետ կապում ընթերցողներին։ Հենց այդ ձևով են Շեքսպիրի երկերը 1850-ականի առաջին կեսին ներկայացվել արևմտահայ ընթերցողներին, որով նշանավորվել է հայ շեքսպիրականի կարևոր փուլը։ Հանդեսի հետ ընթերցողը մաս առ մաս ծանոթացել է Շեքսպիրի «Կատակերգություն» սխալանացք ողբերգության հետ՝ Կ. Տետեյանի թարգմանությամբ՝ կատարված բնագրից, աշխարհաբարխոսակցական լեզվով, որն ավելի դյուրըմբռնելի էր ընթերցողներին<sup>18</sup>։

Մյուս առավել նշանակալի հավելվածը կազմում էին Մուխրի «Ակամա բժիշկ», «Ագահ» և «Սերը բժիշկ է» կատակերգությունները, որոնք թարգմանել է Հ. Տետեյանը՝ զմյուռնահայ գաղթօջախի հոգևոր կյանքում տեղ հարթելով Ֆրանսիական մեծ դրամատուրգի համար<sup>19</sup>, ինչպես և հիմք տալով այդ պիեսներից մեկի՝ «Ագահի», 1862 թ. Կ. Պոլսում բեմադրության համար։ «Արփի արարատյանի» մյուս հավելվածներն էլ ին կազմում «Հազար ու մեկ գիշերներ» տարբերակներից մեկը և «Օսմանյան պատմություն» պատկերազարդ շարքը։

Այդ հրատարակությունների պատմամշակութային նշանակությանը շանդրադառնալով, քննենք բուն հանդեսի առավել կարևոր նյութերը։ «Արփի արարատյանն» ունեցել է ազգային-ուսումնական, աշխարհագրական, բանասիրական, բարոյական, բանաստեղծության, տնտեսավարության և զվար-

16 Այդ հանդեսներից մեկի՝ «Միություն», դեմ ծավալված հալածանքների պատճառով կարճ ժամանակով փակվել է նաև Տետեյանների տպարանը։ Նման հալածանքը, ինչ խոսք, խիստ զգուշավորության է մղել տպարանատերերին։

17 Նկատենք, որ Տետեյանների լուսավորական-հրատարակչական գործունեության ուսումնասիրության խնդիրն առաջադրվել է դեռևս մինչհեղափոխական մամուլում և ավելի շեշտվել ակադ. Ա. Կարինյանի «Արևմտահայ լուսավորիչները 60—70-ական թվականներին» հետազոտությունում (ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1944, № 6—7)։ Խնդրի անհրաժեշտությունն ընդգծվել է նաև հայ գրատպության ու տպարանների պատմությանը նվիրված մի շարք ուսումնասիրություններում Տետեյանների գործունեությանը տրված միաձայն դրական գիտատականներով (Լեո, Վ. Փափազյան, Ա. Արփիարյան, Ա. Ալոյսյան, Գ. Լևոնյան, Ա. Բարսեյան և ուրիշներ), ինչպես և ժամանակի մամուլի բազմաթիվ արձագանքներով («Սարդիկ», «Արևելյան մամուլ», «Փարիզ» և այլն)։

18 Այդ թարգմանությանն առանձին հոդվածով («Գարուն», 1976, № 8) և իր ուսումնասիրության մեջ՝ «Շեքսպիրը և հայ գրական ու թատերական մշակույթը» (Երևան, 1974) անդրադարձել է Լ. Սամվելյանը՝ արժեքավորելով Կ. Տետեյանի ավանդը։

19 Գրեթե կես դար անց՝ 1905 թ., Զմյուռնիայում Մ. Նուպարյանի թարգմանությամբ լույս տեսավ Մուխրի երկերի երկհատորյակը, բայց սուլթանական զրաջնության ահալոր ազավաղումներով։

ճալի նյութերի բաժինները: Գործնական նպատակադրումը հատուկ է հանդեսի շատ նյութերի: Ի տարբերություն ժամանակի այլ պարբերականների, հանդեսը գտնում էր, որ «որևիցե գրություն մը ու կատարելիություն» հայ իրականություն ներմուծելուց առաջ հարկ է հանգամանորեն քննել, ապա նոր միայն հավանություն տալ: Նույն դիտակետից անդրադառնալով դպրոցական դաստիարակությանը, նա առաջ էր քաշում ամենահարկավոր գիտելիքների վրա ուշադրություն դարձնելու հարցը, ընդգծում «խոհական վարմունքով, ծանրաքայլ ու դիտողական գնացքով» ընթանալու անհրաժեշտությունը: Եվ ելնելով ազգի համար Թուրքիայում ստեղծված կացությունից, Արփիի արարատյանն» առաջարկում էր անանկ ազգային ընկերություն մը հաստատել, որ որքան գործ շունեցող մարդիկ կային նե՛ անոնց համար պործք կամ դբադմունք մը հոգալու պաշտոնը վարեք»<sup>20</sup>: «Պզտիկ առաջարկություն մը» անստորագիր հոդվածում, որը հրատարակվել է հանդեսի առաջին երեք համարներում, այդ խնդրին մեծ նշանակություն է տրվում՝ առանց, սակայն, խորամուխ լինելու անգործության սոցիալական պատճառների մեջ:

«Կարոտ եղող մեր խեղճ եղբարց» նկատմամբ հոգատարությունը բնորոշ է հանդեսին, և հենց այդ առումով էլ նրա էջերում քննվում են ազգային դաստիարակության խնդիրները, գաղթօջախի Մեսրոպյան և Հովհաննիսյան վարժարանների վիճակը: Այդ խնդիրների իրագործման ուղին մատնանշված է գաղթօջախի դպրոցների երկարամյա տեսչի՝ Ա. Փափազյանի, ատենախոսությունում, որը կրում է խոստուն վերնագիր՝ «Ազգային դաստիարակությունն է միայն ճշմարիտ միջոց ազգային դաստիարակության»: Բավական չէ ուսում տունել, լիղուներ՝ տիրապետել, շեշտում է բազմափորձ մանկավարժ-լուսավորիչը, այլ կենսականորեն անհրաժեշտ է ազգային կրթություն և դաստիարակություն ստանալը: Հեռատես էր ատենախոսը և որոշակի հիմք ուներ տրուշացնելու օտարին աղերսանքի ձեռք մեկնելու մեծ վտանգի դեմ, նաև բանաձևելու՝ «Նախամեծար համարել պետք է միշտ ազգային դաստիարակությունը» (1855, № 1, էջ 3—4):

Ազգային ինքնագիտակցություն արթնացնելու նպատակով հանդեսն օտար մամուլից արտատպել է հայերի մասին պատմող հոդվածներ, նույնիսկ ազգային հիշատակներին նվիրված ուսումնասիրություն՝ կելիպուլի և Թեբրիդադլի (Ռոդոսթ) հայոց անցյալի վերաբերյալ (1854, № 8, 10, 1855, № 10):

Նպատակ դնելով ամեն կերպ լուսավորել ազգը, Արփիի արարատյանը պարբերաբար նյութեր է հրատարակել «Ուսումնական» խորագրի տակ: «Հնարից և գյուտից պատմություն» ծավալուն ուրվագիծը (1853, № 1—5, 1854, № 3, 7—12) հանդեսի մատուցմամբ ցույց է տալիս, որ «գյուտերուն պատմությունը ուրիշ բան չէ, բայց եթե մարդուն մտաց ու քաղաքականության (իմա՝ քաղաքակրթության—Մ. Հ.) զարգացմանը պատմությունը» (№ 1, էջ 5): Ծավալով փոքր, բայց ճանաչողական արժեք ունեն տարբեր առգերի սովորույթների, Հունաստանի ուսումնական վիճակի, Ռուսաստանի, Ավստրալիայի, Անգլիայի և Ամերիկայի մասին հաղորդումները, բազմաթիվ բնագիտական զրույցներ:

Ընթերցողների (մասնավորապես կանանց) համար օգտակար նյութեր հրատարակելով, Արփիի արարատյանը՝ մշտապես առանձին բաժին է հատկացրել նաև պատանի և մանուկ ընթերցողների համար նախատեսված նյութերին, պարբերաբար զետեղել է հոմանվանակոնիկներ (Ռեբուս), հարցումներ, հանելուկներ, չափածոներ:

Բավական մեծ տեղ հատկացնելով չափածո ստեղծագործություններին, Արփիի արարատյանը՝ նշանավորել է 1850-ական թվականներին տեղի ունեցող անցումը հին՝ գրաբար, ստեղծագործություններից դեպի նոր՝ աշխարհ-

<sup>20</sup> Արփիի արարատյան, 1853, № 2, էջ 18: Այսուհետև Տնտեսյանների հանդեսներից արվող քաղվածքների տեղերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

բար, բանաստեղծութիւնը: Մեսրոպյանի տեսուչ Ա. Փափազյանի, դասատու Ս. Պալապանյանի, աշակերտներ Գ. Մարկոսյանի և Զարմայր Ստեփան Ազնհերցիի այդ կարգի շափածոներից առանձնանում և ստեղծագործական ակնհայտ վարպետութեամբ աչքի են ընկնում Սմբատ Ստեփան Սարգսյանի բանաստեղծութիւնները: Տակավին տասնիննամյա պատանին հանդեսում հրատարակել է «Հավերժութիւն» ծավալուն շափածոն (1854, № 1)՝ դրված թեթև շնչով, լավ հանգավորված, ճոխ լեզվով: Երկու ամիս անց պատանի բանաստեղծը հրատեղ է տվել կյանքին. նրա թողած երգերը, ցավոք, չեն հրատարակվել, թեև հանդեսը խոստանում էր տպագրել դրանք<sup>21</sup>: Նույնքան պարզ, կոկիկ ու դուրընթեռնելի են նաև Կ. Տետեյանի մի շարք շափածոները և, հավանաբար, նրան պատկանող գողտրիկ թարգմանութիւնը՝ «Կենդանաց ժողովը» (1854, № 11), «Գարուն» անանուն բանաստեղծութիւնը (1855, № 11), Սմբատ Կարապետ Պապայանի «Ի բարեբարս ազգիս» (1855, № 1) քերթվածը՝ ազգային-հայրենասիրական ոգով:

Առհասարակ նկատելի է Մեսրոպյան վարժարանի սաների, որոնցից էին նաև Տետեյանները, հետևողական ընթերցանակութիւնը հայրենասիրական այն ավանդների, որ գաղթօջախին ներարկել է Հ. Վանանդեցին իր ստեղծագործութիւններով և Ա. Փափազյանի միջոցով: Այդ ավանդները, սակայն, բանաստեղծական հետագա շարունակութիւն և զարգացում չտացան: Ավելին «Արփի արարատյանի» ստեղծագործողները տարվեցին գրական ուրույն մըրցութեամբ՝ ձգտելով իրար գերազանցել խրթին շափածոներով, առանց «սո» ձայնավորի՝ անյաբ կամ նույն ձայնավորով սկսվող և ավարտվող, մինչև անգամ միայն «խ» բաղաձայնով սկսվող ոտանավորներով: Դրանց հակառակ արժեքավոր են հանդեսի մի շարք թարգմանական նյութերը՝ գերազանցապես բարոյադաստիարակչական բովանդակությամբ՝ արդարասիրության, ազնվության, առաքինության, բարեբարության, սրամտության և այլ գրական հատկանիշների փառաբանությամբ: Նշենք, օրինակ, «Հին տարվոյն վերջին ժամը» այլաբանական պատումը, որտեղ երազ տեսնելու միջոցով ցույց են տրվում մարդկության ու աշխարհի երկատվածութիւնը, կյանքի հակադրութիւնները, ծայրաբևեռ իրականութիւնը. մի տեղ «արևը գարնան ամենապայծառ օրին ավելի պայծառ» է փայլում, իսկ մի այլ տեղ՝ «խավար բանտ», և «թխպոտ ամպերը միշտ շրջապատյալ» են, «հավիտենական թշվառութիւն կտիրեն» (1855, № 6):

Չափազանց ուշագրավ է «Երգ գաղղիացի զինվորին, որ դառնա ի հայրենիք» բոցաշունչ հայրենասիրությամբ ներծծված բանաստեղծության հրատարակութիւնը՝ հիանալի (թերևս Կ. Տետեյանի) թարգմանությամբ (1855, № 4): Անհայտ հեղինակի այս երգում երկրներ նվաճած ֆրանսիացի զինվորը գիտակցում է, որ «հայրենիքս հոս չէ, Ի՞նչ ընեմ ես հոս, Ի՞նչ բան կարող է արժել հայրենաց... Եվ անուշ երկնից մեր տանին նախնայաց»: Այդ զգացումով էլ «վշտալի զինվորը» շտապում է ժամ առաջ թողնել օտար երկրները և վերադառնալ գրողական իր հյուսակո:

Մի փաստ ևս մեծ պատիվ է բերում «Արփի արարատյանին» և նրա հրատարակիչներին. 1854 թ. (№ 12, էջ 153—154) այն հրատարակել է «Մարտիկները»՝ «Երգ հայրենի ազատութիւն» վերնագրի տակ. գրաբար թարգմանությամբ, որ իրաչործել է ՅՅ. Ս. ստորագրող Հակոբ Ռսկանը: Դա «Մարտիկների» հայերեն առաջին թարգմանութիւնն է: Ֆրանսիական բոցաշունչ հեղափոխական երգը, հավանաբար ոչ պատահաբար, քսաներեք տարի անց՝ 1877 թ., հայ իրականութեան մեջ երկրորդ անգամ հանդես է եկել դարձյալ Զմյուռնիայում՝ «Արշալույս արարատյանի» և «Արևելյան մամուլի» էջերում՝ գրաբար և աշխարհաբար:

Տետեյանների այս հանդեսը բարի հիշատակ է թողել նրա ընթերցողների հիշողության մեջ: Դեմոկրատական «Ծաղիկը» 1862 թ. ծանոթագրութեամբ

21 Պատանի բանաստեղծի մասին տե՛ս «Արշալույս արարատյան», 2. VII. 1854:

հիշեցրել է «Արփի արարատյանի» «խիստ օգտակար, կրթալի և զվարճալի հոգվածների» մասին, փափագ հայտնելով ու խրախուսելով, որ Տետեյանները մի նոր հանդես հրատարակեն<sup>22</sup>։ Ակնարկը վերաբերում էր շուտով երեւման եկած «Դիմակ» հանդեսին, որը հրատարակել է Կ. Տետեյանը 1862 թ. օգոստոս—նոյեմբեր ամիսներին (№ 1—7)։

«Դիմակը», կարելի է ասել, կազմել է Կ. Տետեյանի հրապարակագրության պատկեր<sup>23</sup>։ 1860-ականի հայոց մեծ զարթոնքի սկզբներին լույս տեսած այս հանդեսը հատկանշական է իր ժամանակաշրջանի համար։ Ավելի քան կեսգարյա գոյությունից հետո հայ մամուլն արդեն մտնում էր իր իսկական դերի մեջ, քաղաքացիության իրական իրավունք էր ստանում հրապարակախոսությունը, արևմտահայ կյանքը հագեցած էր Ազգային սահմանադրությամբ։

Հասարակական ու մշակութային վերելքի արկածումներում Կ. Տետեյանը կարծես թե իր տեղը գտնում է երգիծանքի և ասելիքը դիմակավորված՝ այլաբանորեն արտահայտելու մեջ։ Դրա համար նա որոշ փորձ էր ձեռք բերել այլ պարբերականների, մասնավորապես «Հավերժահարսի» էջերում։ Եվ ահա, հիմնվելով ու հրատարակելով «Դիմակը», նա ազատություն է տալիս այդ արտահայտչաձևին, հիմնականում այլաբանորեն խոսելով ընթերցողի հետ, բայց և արծարծելով լուրջ հարցեր։ Հանդեսի անդրանիկ համարի թեթև հումորով գրված «Անխաբանությունում» արդեն Կ. Տետեյանն առաջադրում է ծրագրային մի խնդիր, ըստ որի երիտասարդ սերունդը մարախային ոստումներից ու առոժամանակյա ճայթումից հետո պետք է անցնի ազգային գործերի գլուխը, լսելի դարձնի իր «նորաշունչ հնչմունքը», և այդ գործում որոշակի դեր պետք է կատարեն «ազգային ականջներուն մեծենական դեղերը»՝ պարբերականները։ «Մամուլը որքան ազատ ըլլա այնքան օգուտ կբաղեւ ազգ մը», — եզրակացնում է խմբագրականը՝ խոստանալով «Դիմակը» երևան հանել «Ճպուհաճիչ ճիգերով ու ճիկերով», բայց և հետագայում «Տիրտանյան դեմք մը» առնելու հույսով («Դիմակ», 1862, № 1, էջ 1)։ Նոր հանդեսի այդ ուղեգիծը դրվատանքով են նշել «Մաղիկը», «Մեղուն» և «Փարիզը»։

Սկզբից եեթ պետք է շեղտել, որ խմբագիր-հրատարակչի նախասիրած արտահայտչաեղանակը լայն հնարավորություն էր ընձեռում և հեռանկարային իմաստով շատ արդյունավետ կարող էր լինել, ինչպես դա եղավ շատ տարիներ հետո՝ Հ. Պարոնյանի մեծատաղանդ գրչի շնորհիվ։ Ըստ էության այդ ուղղությունը Կ. Տետեյանը ստակ առաջին քայլերն է արել, բայց և կարողացել է ի հայտ բերել երգիծական-այլաբանական արտահայտչաձևի որոշակի հնարավորությունները։

1862 թ. օգոստոսի 15-ի համարում «Դիմակն» արձագանքել է երկու շաբաթ առաջ Կ. Պոլսում տեղի ունեցած ժողովրդական ցույգին՝ տպագրելով «Նոր պարահանդեսարահ» հաղորդումը (էջ 13) և դրան կցելով «վերջին հեռագրական լուրը», որով փորձողության էր մղում «ազգային սահմանադրասեր երիտասարդությունը»։ Նույն ձևով «Դիմակն» արձագանքել է նաև Զեյթունի ապստամբությանը։ «Նոր թեատրոն» (էջ 23) վերնագրով, «Արյունահեղ դերասանություն ի Զեյթուն» բացատրությամբ «Դիմակը» տպագրել է ողբերգության միայն գործող անձանց ցանկը՝ զեյթունցիների հարևաններին համարելով «թշնամի մարդասպանք» և տեղեկացնելով, որ «ալապին սեհաճություն» է իմացել «վտանգավոր դերասանություն» տրված ներկայացման մասին։ Հանդեսն ազատ չէր իր խոսքն ոսղիղ ձևով ասելու և դրա համար էլ նկատում է, թե «դեռ ինչ տեսակ ներկայացում ըլլալը չենք կրնար անվանել»։ Բայց տեղուտեղն էլ խմբագիրը մատնացույց է անում, թե «մերազնայթ

<sup>22</sup> «Մաղիկ», 10. III. 1862, էջ 210։

<sup>23</sup> Այստեղ չենք անդրադառնում այլ պարբերականներում Կ. Տետեյանի հրատարակած մեծարժեք այլ գործերին, որոնք սկզբնաղբյուրի արժեք ունեն։

պարտին վերոհիշյալ թատրոնին ճշմարիտ անցքերը ժանուցանել կվըրճ Են-  
րալտին, որ Եվրոպիո կարծիքը ուղղի» (էջ 23): Այս դեպքում ևս «Դիմակը»  
որոշակի նպատակ էր հետապնդում. Կ. Պոլսում տպագրվող և Եվրոպայում  
մեծ տարածում ունեցող հիշյալ թերթն աղավաղել, խեղաթյուրել էր Զեյթու-  
նում ստեղծ ունեցածը՝ զեյթունցիներին համարելով կոտորած հրահրողներ,  
իբր մատնանշումով «Դիմակն» արձագանքում էր դեմոկրատական մամուլի՝  
«Օաղկի» և «Մեղվի» դիրքորոշմանը:

Մեկից ավելի անգամ է Կ. Տետեյանի հանդեսն արտահայտել իր հա-  
մակրական վերաբերմունքը «Մեղուի» նկատմամբ: «Անճարակաց դրքեն քաղ-  
վածք» (1862, № 5, էջ 38—39) այլաբանական հոդվածում «Դիմակն» ունուղ-  
ղակի պաշտպանել է «Մեղուի» դատը և ծաղրել նրա զերը շրմբունող անճա-  
րակներին, որոնք առաջադիմական-դեմոկրատական մամուլից պահանջում  
էին՝ «Դուն քու ազգասիրությանդ քարոզել, մտիկ ընեն աղեկ, եթե ոչ ձայնդ  
կտրել, վար նստել» (էջ 39):

«Դիմակում» դրսևորում են գտել երգիծանքի բազմազան ձևեր՝ չափածո,  
քառյակներ ու երկտողեր, երկխոսություն, նամակ, աֆորիզմներ, ազգ, կա-  
տակ, սրախոսություն, դրամա-պատկեր, զավեշտալուրեր, հրդիծական բա-  
րեմաղթություն, առածներ, ակնարկ: Դրանց բոլորի հեղինակը, անշուշտ,  
Կ. Տետեյանն է, որն իր «Դիմակով» և այլուր տպագրած նյութերով իրավունք  
ունի դասվելու հայ առաջին երգիծաբանների շարքը: Նուրբ հումորով ու վար-  
պետ դիտողականությամբ է գրված նրա «Զրուշտությունը» շարքը (№ 1—5),  
որտեղ, նկարագրելով կենդանիներին ու ջուլահանելով նրանց հատկանիշնե-  
րը, նա փաստորեն ծաղրում ու մերկացնում էր մարդկային արատները:

Մեծ վարպետությամբ նկարագրելով «ահազնատեսիլ ապառաժի» և «առ-  
յուծակատաղ կոհակներին» երբեք չդադարող մարտակռիվը, Տետեյանը վեր-  
ջում նկատում է. «Աս կոհակները՝ իրենց անզուսպ փրփրանոքը, կմանին ան-  
բարեխառն մարդկանց, որ իրենց քղանցքներուն հետ կռիվ կփնտռեն և ձեռ-  
քերնուն զա շնչին պատճառի համար կործանել կուզեն զմեկը, որ բնավ երբեք  
իրենց դպած չէ և իրենց ատելություն պատճառն այ ուրիշ բան չէ, այլ անոր  
նեղակալությունը, որ իրենց նախանձը կբորբոքե» (№ 4, էջ 26): Այդ նույն  
այլաբանությամբ մեջ կարելի է նշմարել «Ծովային բազեններին և արծիվնե-  
րին», այսինքն զեյթունցիներին ուղղված դրվատանքներ, ի տարբերություն  
Կիլիկիայի լեռնաստաններն իրենց համար «բուսարան» դարձրած այլացեղ  
կողոպտիչ-պարազիտներին:

Կ. Տետեյանը «Դիմակի» երկրորդ համարից բացել է «Թերթ ափեղ-  
ցը փեղությունց» բաժինը<sup>24</sup>, ապա և կերտել է «Թուփիկ և Տմպլիկ» երգիծական  
կերպարները, որոնք նրան հնարավորություն են տվել ավելի լայն ընդգրկում-  
ների և ձկուն ձևեր կիրառելու համար: «Դիմակում» խմբագրի բանեցրած  
եզովպոսյան լեզվի և այլաբանությունների մեկունության համար հարկ է  
ավելի խոր հետազոտել յուրաքանչյուր ակնարկ: Այդ դեպքում երևան  
կգա հանդեսի շատ նյութերի, այսպես ասած, աստաղը. նրանց իրական հիմ-  
քը, որով ավելի ևս կընդգծվի «դիմակավոր» քննադատության ու մերկացում-  
ների հասարակական արժեքը: Հանդեսի այդ լեզուն ժամանակակիցներին  
ավելի հասկանալի էր, քան այսօր դա հնարավոր է պարզել: Իզուր չէ, որ  
Հ. Սըվաճյանը «Դիմակին» և Կ. Տետեյանին հղած բարեմաղթանքում երգի-  
ծառճով նաև փափագ էր հայտնում, որ հանդեսը հասնի այնպիսի կացության,  
որ «Դիմակը վար առնել կամ պատռել»<sup>25</sup>:

<sup>24</sup> Այս մասին պարբերականներում արված հիշատակությունները հայ մամուլի մատենա-  
գետներին շփոթության մեջ են դրել՝ ենթադրել տալով թե Կ. Տետեյանը հրատարակել է նաև  
«Ափեղցիներ» երգիծաթերթը, որը ոչ ոք չի տեսել ու չի նկարագրել իրականորեն:

<sup>25</sup> «Մեղու», 10. IX. 1862, էջ 192.

«Դիմակը» մեր մշակույթի տարեգրության մեջ նշանավորվել է նաև մի խոշոր ավանդով: Նրա համարներում, առաջին անգամ հայ իրականության մեջ, հրապարակ է եկել Շեքսպիրի գլուխգործոցի՝ «Համլետի», թարգմանությունը (№ 1—7), որը, ինչպես նշվեց, բնագրից կատարել է հանգեսի խմբագիր Կ. Տետեյանը: Այդպիսով «Համլետը», թեև անավարտ, մուտք է գործել հայ իրականություն, որով սկսվել է նրա անվերջանալի ուղին հայ մշակույթի անդաստանում: Տետեյանի այդ խոշոր ծառայությունը բարձր են գնահատել հայ շեքսպիրականի պատմաբան հետազոտողները<sup>26</sup>, նույն 1862 թ. Կ. Տետեյանի թարգմանությամբ «Հավերժահարս» հանդեսում հրատարակվել է Շեքսպիրի «Վենետիկի վաճառականի» արգեն ամբողջական թարգմանությունը<sup>27</sup>:

Ձմյուռնիայում Տեսեցանքի ծավալած թարգմանչական, հրատարակչական և խմբագրական-հրապարակադրական գործունեությունն անպայման առաջադիմական էր և նպաստում էր հայ կյանքի ու հասարակական մտքի զարթոնքին և առաջադիմությանը: Այդ գործունեությունը հիմնականում բնութագրվում է հայ իրականության առաջադրած խնդիրների ակտիվ արձագանքով, գրականության, աշխարհաբար լեզվի և հրապարակախոսության առաջընթացին մատուցած նպաստով, գրական և սոցիալական մի շարք հարցերի արժարժումով:

## КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ТЕТЕЯНОВ

МИКАЕЛ АКОПЯН

### Резюме

Братья Тетейаны в г. Измире основали в 1853 г. типографию, вокруг которой сплотилась передовая молодежь армянской колонии (Г. Чилинкирян, М. Нупарян, М. Мамурян, С. Мирзаян-Ванандеци, Гр. Мсерян и др.). За годы существования типографии (до 1893 г.) было издано 208 названий переводных и оригинальных книг. На армянском языке увидели свет произведения Мольера, Гюго, Гете, Дюма, Вольтера и других западноевропейских писателей, переведенные, в большинстве случаев, самими братьями.

Тетейаны издавали основанные ими же журналы «Арпи Араратян» («Араратские зори», 1853—1856 гг.) и «Димак» («Маска», 1862), содействовавшие национальному пробуждению, становлению армянской передовой журналистики и публицистики.

<sup>26</sup> Լեո, Շեքսպիրը հայերի մոտ («Հորիզոն», 8, 10, 18, 25, V. 1916), Վ. Թեքզիրաշյան, Շեքսպիրը հայերեն, Երևան, 1956, Ե. Նազարյան, «Համլետի» նոր թարգմանություն («Շեքսպիրական», Երևան, 1966), Լ. Սամվելյան, նշվ. աշխ., Բ. Ջարյան, Շեքսպիրը և հայերը, Երևան, 1976 (նույնը՝ ֆրանսերեն և անգլերեն):

<sup>27</sup> Հետագայում Կ. Տետեյանը հրատարակել է նաև Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետի» թարգմանությունը՝ կցելով Շեքսպիրի կենսագրականը և գնահատելով նրա գրական վաստակը: